



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

**ՀԱԱՀ ներքին և արտաքին շահակիցների  
կարիքների վերհանման գործընթացների իրականացման  
արդյունավետության  
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

ԵՐԵՎԱՆ 2016

## ՆԱԽԱԲԱՆ

Համալսարանի ռազմավարության արդյունավետության գնահատման համար համալսարանը՝


- պարբերաբար իրականացնում է համալսարանի գործունեության մշտադիտարկում,
- բացահայտում է շահակիցների պահանջունքները և սպասումները,
- գնահատում է առկա գործընթացները և ռեսուրսները:

Համալսարանը պարբերաբար իրականացնում է շահակիցների կարիքների բացահայտման գործընթաց մշտադիտարկման միջոցով:

Շահակից կողմերի կարիքների վերհանումը որակական և քանակական տեղեկատվության համակարգված հավաքագրման գործընթաց է, որը ենթադրում է նրանց կարիքների և պահանջների բացահայտումը և գնահատումը՝ համալսարանի գործունեության բարելավմանը ուղղված որոշումների կայացման և ուղղիչ գործողությունների պլանների կազմման և իրականացման համար:

Շահակից կողմերի կարիքների գնահատումը հիմք է համալսարանի ղեկավար կազմի կողմից ճիշտ որոշում կայացնելու համար:

Շահակիցների կարիքների բացահայտման և գնահատման գործընթացը ենթադրում է հետևյալ շրջափուլի իրականացումը՝



**ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՇԱՀԱԿԻՑՆԵՐԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՎԵՐՀԱՆՄԱՆ  
ԳՈՐԾԸՆԹԱՑ**

**Համալսարանի ներքին և արտաքին շահակից կողմերն են՝**

- **Ներքին շահակից կողմեր**
- ուսանողներ,
- պրոֆեսորադասախոսական կազմ:
- **Արտաքին շահակիցներ**
- դիմորդներ,
- շրջանավարտներ,
- գործատուներ:

Համալսարանի ներքին և արտաքին շահակիցների կարիքների վերհանման գործընթացը իրականացվում է հետևյալ մեխանիզմներով՝

- Համալսարանի շահակիցների անկետավորում,
- Պրոֆեսորադասախոսական կազմի կարիքների վերհանում ամբիոնների նիստերին, ֆակուլտետային և համալսարանական գիտական խորհուրդներին,
- Ուսանողների կարիքների բացահայտում համալսարանի կրթական տարբեր կառուցվածքային ստորաբաժանումների կողմից,
- Գործատուների կարիքների բացահայտում անկետավորման և ֆոկուս-խմբերի միջոցով:

**❖ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՎԵՐՀԱՆՈՒՄ**

Ուսանողների կարիքների վերհանման գործընթացը կրում է բազմակողմանի բնույթ՝

- կարիքների ուսումնասիրում և օժանդակում վարչական կազմի կողմից ուսումնառության ընթացքում,
- կարիքների վերհանում ուսանողական խորհրդի կողմից ռեկտորատի նիստերին և գիտական խորհրդի նիստերին (սոցիալական, մշակութային և այլ հարցեր),
- դասընթացների որակի և դասավանդման գործընթացի գնահատում որպես կրթական ոլորտում կարիքի վերհանման գործընթաց,
- համալսարանի ռեսուրսային բազայի գնահատում,
- համալսարանի կրթական ծառայությունների գնահատում,
- համալսարանի վարչական կազմի աշխատանքի գնահատում,
- ուսանողների ՈՒԳԸ գործունեության մեջ ներգրավվածության գնահատում,
- ուսանողների կարիքների բացահայտում համալսարանի աշխատանքի տեղավորման և խորհրդատվության բաժնի կողմից:

**❖ ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՎԵՐՀԱՆՈՒՄ**

Պրոֆեսորասախոսական կազմի կողմից կարիքների վերհանման գործընթացը նույնպես կրում է բազմակողմանի բնույթ՝

- Կարիքների վերհանում ամբիոնների նիստերի քննարկումների արդյունքում (դասավանդման և գիտական գործունեության վերաբերյալ):
- կարիքների վերհանում ֆակուլտետային գիտական խորհուրդների նիստերին:
- կարիքների վերհանում անկետավորման միջոցով (բավարարվածությունը ընդհանուր կրթական միջավայրից, կառավարման համակարգից, կրթական և գիտական գործունեություն ծավալելու համար ռեսուրսային բազայի մակարդակից):

**❖ ԴԻՍՈՐԴՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՎԵՐՀԱՆՈՒՄ**

Համալսարանում յուրաքանչյուր տարի դիմորդների շրջանում իրականացվում են մասնագիտական կողմնորոշման և տեղեկատվության ապահովման միջոցառումներ:

Իրականացվում են բաց դռների օրեր, որի ժամանակ տարբեր շրջանների դպրոցների ավագ դասարանների աշակերտներին ծանոթացնում են համալսարանի կառուցվածքին:

ՀԱԱՀ Ուսումնամեթոդական կենտրոնի Կրթական բարեփոխումների, ռազմավարական պլասավորման և նորագույն տեխնոլոգիաների բաժինը 2016 թ.-ին իրականացրել է փորձնական հարցում ՀՀ շրջանների ավագ դպրոցների ավարտական դասարանների աշակերտների շրջանում:

**❖ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՎԵՐՀԱՆՈՒՄ**

Համալսարանի շրջանավարտների կարիքների բացահայտումը իրականացվում է ՀԱԱՀ Աշխատանքի տեղավորման և խորհրդատվության բաժնի կողմից:

Աշխատանքի տեղավորման և խորհրդատվության բաժինը ունի համապատասխան կայք էջ, որտեղ շրջանավարտը կարող է որոնել աշխատանքի վերաբերյալ համապատասխան ինֆորմացիան:

Բաժինը ձևավորում է ՀԱԱՀ շրջանավարտների տվյալների բազա, որի միջոցով կապ է հաստատում նրանց հետ:

Տեմպուսի Hen-Gear ծրագրի շրջանակներում Աշխատանքի տեղավորման և խորհրդատվության բաժինը իրականացնում է հարցում շրջանավարտների շրջանում համալսարանի կրթության որակի վերաբերյալ:

ՀԱԱՀ Ուսումնամեթոդական կենտրոնի Կրթական բարեփոխումների բաժնի կողմից 2016 թ.-ին իրականացվել է համալսարանի շրջանավարտների անկետավորում համալսարանի կրթության որակի վերաբերյալ:

## ❖ ԳՈՐԾԱՏՈՒՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՎԵՐՀԱՆՈՒՄ

Համալսարանի աշխատաշուկայի ներկայացուցիչների և գործատուների պահանջները և կարիքները բացահայտվում են՝

- Շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման ժամանակ (որպես կանոն ագրոպարենային ոլորտի աշխատաշուկայի ներկայացուցիչները և գործատուները մասնակցում են որպես ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահներ և ներկայացուցիչներ):
- Գործատուները ամփոփիչ ատեստավորման արդյունքում կազմում են արձանագրություն կրթական ծրագրի որակի վերաբերյալ:
- ՀԱԱՀ Աշխատանքի տեղավորման և խորհրդատվության բաժինը պարբերաբար կապ է հաստատում աշխատաշուկայի ներկայացուցիչների հետ և հետադարձ կապի միջոցով հավաքագրում նրանց կարծիքները և արձագանքները:
- ՀԱԱՀ Աշխատանքի տեղավորման և խորհրդատվության բաժինը իրականացնում է հարցում գործատուների շրջանում շրջանավարտների գիտելիքների, կարողությունների մակարդակի վերաբերյալ:

**ՀԱԱՀ ներքին շահակիցների կարիքների վերհանման գործընթացների իրականացման արդյունավետության վերլուծություն**

Համալսարանի ներքին շահակիցների (ուսանողներ, պրոֆեսորադասախոսական կազմ) ռեսուրսային բազայից բավարարվածության մակարդակի բացահայտում և գնահատում

Համալսարանի ուսանողների կարիքների վերհանում կապված սրամադրվող կրթական ծառայությունների հետ

Համալսարանի ուսանողների կարիքների վերհանում կապված վարչական կազմի կողմից օժանդակումից

Համալսարանի ուսանողների կարիքների վերհանում սոցիալ-տնտեսական վիճակի վերաբերյալ

Համալսարանի ուսանողների կարիքների վերհանում կապված ՈԻԳԸ-ում ներգրավվածության հետ

**ՀԱԱՀ արտաքին շահակիցների կարիքների վերհանման գործընթացների իրականացման արդյունավետության վերլուծություն**

Համալսարանի դիմորդների շրջանում կարիքների վերհանում

Համալսարանի շրջանավարտների շրջանում կարիքների վերհանում ուղղված կրթության որակին

Համալսարանի շրջանավարտների շրջանում կարիքների վերհանում ուղղված կրթության որակին

## SWOT ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
<ol style="list-style-type: none"> <li>1. Համալսարանում գործում են բոլոր շահակիցների կարիքների վերհանմանը ապահովող մեխանիզմներ:</li> <li>2. Համալսարանում ներքին շահակիցների, մասնավորապես ուսումնառողների շրջանում բազմակողմանի իրականացվում են կարիքների վերհանում, վերլուծություն և գնահատում:</li> <li>3. Համալսարանում սկսել են արտաքին շահակիցների վերհանման գործընթացը անկետավորման միջոցով:</li> <li>4. Համալսարանում դիմորդների հետ տարվում են տարաբնույթ միջոցառումներ (մասնագիտական կողմնորոշում, տեղեկատվության ապահովում, խորհրդատվություն, բաց դռների օրեր, Skype-ի միջոցով դիմելու հետ կապված հարցերի պարզաբանում):</li> </ol>	<ol style="list-style-type: none"> <li>1. Համալսարանում թույլ է զարգացում համալսարան-գործատու կապը և դրա միջոցով աշխատաշուկայի ներկայացուցիչների պահանջների և կարիքների ուսումնասիրման գործընթացը:</li> <li>2. Շրջանավարտների հետ լիարժեք կապի ապահովումը դժվարանում է շրջանավարտի ավարտելուց հետո:</li> <li>3. Պրոֆեսորադասախոսական կազմը զուսպ է պատասխանների մեջ, քանի որ անկետաներում նշվում է նրանց տարիքը և ընդունելության տարեթիվը:</li> <li>4. Ուսանողների որոշակի տոկոս կուպետենտ չի հարցման թերթիկը լրացնելու համար</li> </ol>